№ 121 ՇԱԲԱԹ ՅՈՒԼԻՍԻ 1 — 1900 — ՇԱԲԱԹ ՅՈՒԼԻՍԻ 1 № 121

ՔՍԱՆՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакція «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.
Տէլէֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Բարեկ Սարգսեան Եղիազարեանց եւ սրա քոյր Թեկղէ Սարգսեան Տէր-Աստուրեանց ցաւօք սրտի յայտնելով իրանց անմոռանալի քրոջ՝

ԿԱՏԱՐԻՆԷ ՍԱՐԳՍԵԱՆ ԱԼԻԽԱՆԵԱՆՑԻ

մահը, խնդրում են ազգականներին եւ բարեկամներին չնորհ բերել հանդուցեալի յուղարկաւորութեանը, որ տեղի կունենայ յուլիսի 2-ին, կիրակի, առաւօտեան 10 ժամին, իր սեփական տնից դէպի Կուկիայի ս. Աստուածածին Թանգոյեան եկեղեցին։—Աղբիւրը կը կատարվի յուլիսի 1-ին, շաբաթ, երեկոյեան 7 ժամին։—Միքայէլեան փողոց, սեփական տուն, № 87, հիւանդանոցի հանդէպ։ 1—1

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Մի նոր գաւառ Անդրկովկասում.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մամուլ. Արձագանքներ. Նամակ Երեւանից. Նամակ Իգդիրից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Զինական գործեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Հայկական տպագրութիւն։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԱՄՈՒԼ

Մի նոր գաւառ Անդրկովկասում

Երեւանեան Նահանգում որոշված է բանալ մի նոր գաւառ, որ պէտք է կոչվի Օրդուբաթի գաւառ։ Այդ նոր գաւառը կը կազմվի Նախիջեւանի եւ Զանգեզուրի գաւառների մասերից։ Նոր գաւառի մէջ կը մտնեն Գողթան և Արեւիք կոչված տեղերը, կենտրոն ունենալով Օրդուբաթ քաղաքը։

Օրդուբաթի գաւառ կազմելու պահանջը վաղուց էր զգացվում։ Մեղրին իր շրջակայքով թէև գտնվում էր Զանգեզուրի գաւառի սահմաններում, սակայն միշտ նայում էր Օրդուբաթին, իբրև աւելի մօտիկ վաճառականոցի, որ մի և նոյն ժամանակ գտնվում է հաղորդակցութեան ճանապարհի վրա դէպի Թիֆլիս և երկաթուղիները։ Գողթանի ազգաբնակութեան համար մեծ ծանրութիւն էր գնալ դէպի հեռաւոր գաւառական Նախիջեւան քաղաքը, իսկ Արեւիքի ժողովրդի համար դէպի գաւառական կենտրոն Գօրիսը։ Մինչդեռ Օրդուբաթը թէ Գողթանի և թէ Արեւիքի համար մի մօտ և յարմար կենտրոն է։

Նախիջեւանի և Զանգեզուրի գաւառները, գտնվելով Պարսկաստանի սահմաններին կից և ունենալով բացի ներքին գաւառական գործերից նաև սահմանի վերաբերեալ առանձին հսկողութիւն, դժուարացնում էին գաւառական իշխանութեան պարտաւորութիւնների անբիծ և բաւարար կատարումը, մանաւանդ որ այդ գաւառները ընդարձակ տարածութիւն ունեն և պատկանում են մեծ գաւառների շարքին։ Իսկ այժմ կազմելով երկու գաւառի փոխարէն երեք գաւառ և տալով տեղական ազգաբնակութեան իր բնական շրջաններին մօտ կենտրոններ, կարելի է գաւառական վարչական գործը աւելի հեշտ կերպով բարեկարգել։

Օրդուբաթի գաւառը, չը նայելով այն հանգամանքին, որ պէտք է նոր կազմվի, ամենևին յետ չի մնայ իր շրջակայ գաւառներից։ Այդ գաւառի կազմութեան մէջ պէտք է մտնեն այնպիսի տեղեր, ուր ազգաբնակութիւնը վաղուց ընտելացել է գրագիտութեան և ունի ձեռնարկու ոգի։ Այնպիսի տեղեր, ինչպէս են Վերին և Ներքին Ագուլիսը, Ցղնան, Մեղրին և նրանց մօտ գտնվող գիւղերը իրանց մտաւոր պատրաստութեամբ, առևտրով և արհեստով, համարեա գոյութիւն չունեն շրջակայ գաւառներում, որտեղ գերիշխում են նահապետական կարգեր և անշարժութիւն։

Նոր կազմվող գաւառը այգեգործութեան, շերամապահութեան, մեղուաբուծութեան, բամբակագործութեան երկիր է, որը, սակայն, կաշկանդված է զգում իր գործունէութիւնը ջրի պակասութեան պատճառով։ Արաքսը, որ անցնում է այդ երկրով, մինչև այժմ ապարդիւն է մնացել նրա համար։ Ոչ ոք չը ձեռնարկեց օգտվելու ջրի այդ մեծ շտեմարանից՝ ուղղելու ընդարձակ դաշտերը և նրանց գցելու արգաւանդ հողերի շարքը։ Ոչ ոք չը հոգաց, որ լեռնական մասերում բացվեն նոր աղբիւրներ և կազմվեն ջրամբարներ արհեստական միջոցներով։

Ցանկալի է, որ նոր կազմվող գաւառի իշխանութիւնը ձեռք ձեռքի տալով ազգաբնակութեան հետ, գործունէութեան կոչի տեղական կուլտուրական ոյժերը և տեղական դրամագլուխները՝ արգաւանդացնելու մի երկիր, որ հին ժամանակները եղել է բարգաւաճ և բարեբեր մի տեղ և որը կը-ռում է իր մէջ արդասաւորութեան տարրը թէ ազգաբնակութեան կուլտուրական հակումների և թէ բնութեան բեղմնաւոր պայմանների կողմից։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

(Պատմական տեսութիւն)

Գիրքը մարդու մեծագոյն գանձն է։

Կարլէյլ

1470 թուականին, Յովհան Գուտենբերգի մահից երկու տարի միայն անցած, Պարիզի համալսարանի ռեկտոր Ֆիշէ գրում էր գիտնական Բօբերտ Հազէնին.

«Ինչպէս ասում են, Մայնց քաղաքից ոչ հեռու ապրում էր ոմն Յովհան Գուտենբերգ, որ հնարեց տպագրութեան արուեստը... Այս մարդը ճշմարտապէս արժանի է, որ բոլոր մուսաները, բոլոր արուեստները և մարդկային բոլոր այն լեզուները, որոնք օգտվում են գրքից, փառաբանեն նրան աստուածային գովեստներով։»

Այժմ ոնվում է Գուտենբերգի ծննդեան հինգ հարիւր ամեայ տարեդարձը և աստուածային գովեստները լսվում են քաղաքակրթված աշխարհի բոլոր կողմերից։ Լուռ չը պիտի մնանք և մենք, քանի որ մենք էլ մէկն ենք այն լեզուներից, որոնք այնքան երախտապարտ են Գուտենբերգին։

Տասն երեք տարուց յետոյ չորս հարիւր տարի կանցնէ այն օրից, երբ լոյս տեսաւ հայերէն առաջին տպագրած գիրքը։ Չորս դարերի այդ երկար շրջանում եթէ հայկական կեանքի մէջ կարելի է գտնել մի մըխիթարական երեւոյթ,—դա միայն տպարանական մամուլն է։ Չորս դարերի մեր պատմութիւնը այդ հրաշալի գործիքի պատմութիւնն է.—մենք, ի հարկէ, այն պատմութիւնը չունենք ի նկատի, որ հայի արեան, արտասունքների և տարկութեան մասին է խօսում, այլ այն պատմութիւնը, որի առարկան մեր կուլտուրական ու մտաւոր առաջադիմութիւնը պիտի լինի։

Ցիշդ է, կար և մի այլ ասպարէզ—վաճառականութիւնը, ուր հայը ցոյց էր տալիս իր կուլտուրական ընդունակութիւնները։ Բայց վաճառականութեան մասին դեռ Արիստոտէլն ասում էր. «Ոսկին դարձել է նպատակ, մինչդեռ նա պիտի լինի միայն միջոց»։ Հին աշխարհի այդ հսկայ խելքը դատութեամբ էր արձանագրում, որ ոսկի հորթը կլանում է քաջութիւնը, պատերազմական արուեստը, գիտութիւնը իր բոլոր ճիւղերով։ Ոչ մի տեղ վաճառականութիւնը ազգային գոյութեան միակ նեցուկ չէ եղել. նա ազգ ու հայրենիք չէ էլ ճանաչում, եւ այն ազգերը, որոնք իդէալ ու պաշտամունք են դարձրել վաճառականութիւնը միայն, չարաչար պատժվել են ու կորել։

Հայերը, բարեբաղդաբար, իրանց ուշքն ու միտքը միայն ոսկի հորթին չը նուիրեցին։ Նրանց համար կար և մտաւոր գործը, որին ծառայեցին թէև համեմատաբար թոյլ չափերով, բայց յարատեւ եռանդով ու տոկունութեամբ։ Այդ գործունէութիւնը, որ մեր գոյութեան ամենահզօր պատուարն է եղել, տպագրական մամուլի ամենամեծ երախտիքներից մէկն է կազմում։

Մօտ չորս դար մեզ ապրեցրել է Գուտենբերգի գիւտը։ Եւ այսօր, երբ ոնվում է մեր այդ անման երախտաւորի յոբելեանը, ի՞նչ կարող ենք մենք նուիրել նրա անմահ յիշատակին։ Միայն մի բան—մեր երախտագիտութիւնը։ Դա է մեր միակ պակը Գուտենբերգի անյայտ գերեզմանի վրա։ Իսկ թէ որքան թանգագին է այդ պակը, մենք այդ կարող կը լինենք չափել ու կշռել, երբ կիմանանք թէ ինչ էր տպագրութիւնը մեզ համար։

Ահա այդ բանն ենք մենք փորձում պարզել մեր ներկայ պատմական համառօտ տեսութեան մէջ։

ԱՌԱՋԻՆ ՇՐՋԱՆ

XVI դար

I

Նորագոյն հետազօտութիւնները ապացուցել են, որ հայերէն առաջին տպագրութիւնը եղել է Վենետիկում 1512 թուին։ Այդ եւ յաջորդ 1513 տարիներում միմեանց ետեւից լոյս տեսան հինգ գրքեր. «Պարզատօմար», «Պատարագատետր», «Ուրբաթագիրք», «Տաղարան» եւ «Աղթարք»։

Իւրաքանչիւր ազգ մի առանձին պարծանքով է պահում իր առաջին տպագրիչի անունը։ Իսկ մենք չը գիտենք թէ ո՞վ էր որ առաջին անգամ հայերէն տառեր ձուլեց եւ գիրք տպեց։ Ճիշտ է, 1513-ի հրատարակութիւնների մէջ յիշատակվում է մի ոմն Յակոբ, բայց այս մարդու մասին մենք ոչ մի տեղեկութիւն չունենք։ Եւ հաւանի թէ Յակոբը եղած լինի առաջին հայ տպարանատէրն ու տպագրիչը։ Միանգամայն հաւանական է, որ այդ բոլոր վենետիկեան հրատարակութիւնները տպագրված են իտալական տպարանում, իտալացիների ձեռքով։

Վենետիկը, հայերի լուսաւորութեան այս գեղեցիկ հայրենիքը, փառաւոր տեղ է գրաւում տպագրութեան պատմութեան մէջ։ Տպարանը շատ շուտ դուրս եկաւ Գերմանիայի սահմաններից. եւ առաջին երկիրը, որ չատպեց հիւրընկալել նրան, Իտալիան էր, ուր այդ ժամանակ ծաւալվում էր Վերածնութեան դարի մտաւոր եռանդոտ գործունէութիւնը։ Բայց իտալական քաղաքներից ոչ մէկը հարուստ ու լուսաւոր Վենետիկի պէս չը հոչակվեց իր տպարանական գործերով։ Ադրիական ծովի չքնաղ թագուհին ոչ միայն կատարելագործեց տպագրական տառերը, զարմանալի նրբութեան հասցրեց արուեստը, այլ եւ առաջինն էր, որ ցոյց տուեց թէ ինչ կոչում ունի տպարանը մարդկութեան համար։ Տպագրութիւնը Վենետիկում մտաւ 1469 թուին։ Այդ ժամանակից հազիւ քսան եւ հինգ տարի անցած՝ այնտեղ գործում էին 150 տպարաններ. 25 տարվայ ընթացքում Վենետիկի մէջ տպված գրքերի թիւը հասնում է 2 միլիոնի...

Բայց մեծագործութիւնը միայն այդ ահագին քանակութիւնը չէ։ Մինչդեռ Գերմանիայում եւ ուրիշ տեղերում տպարանը հրատարակում էր մեծ մասամբ կրօնական գրուածքներ եւ դասագրքեր, Վենետիկը սկսեց անյայտութեան խաւարից լոյս հանել հին կլասիկներին։ Այդ գործով հռչակվել եւ անմահացել է մանաւանդ Ալդօ Պիօ, որ տպարան հիմնեց XV դարի վերջերում եւ որի ժառանգները երկար ժամանակ նոյնպէս հռչակաւոր տպագրիչներ էին։

Դաժան, հոգեմաշ գործ էր հին ձեռագիրներ հրատարակելը, մանաւանդ երբ դրանք Պլատոնի եւ Արիստոտէլի նման հանճարների գրուածքներն էին։ Պէտք էր մանրակրկիտ համեմատութիւններ անել, հետազօտել ձեռագիրների տարբերութիւնները, գտնել աղաւաղումները, պէտք էր արթուն լինել, որ իւրաքանչիւր կէտ իր տեղը լինի։ Մօտ երեսուն գիտուն մարդիկ օգնում էին Ալդօ Պիօին, մեծ մասը ձրի, ոգեւորված գործի վեհութեամբ։ Դա գրքերի մի պարզ հրատարակութիւն չէր, այլ արբագործութիւն. տպագրիչները գիշերները չէին քնում, աշխատում էին աղթելով, լաւ հասկանալով թէ ինչ մեծ եւ պատասխանատու գործի են ձեռնարկել։

Տպարանը, իբրեւ նոր գործ, բազմաթիւ պակասութիւններ ունէր. բայց վենետիկեան հռչակաւոր տպագրիչների անձնազոհութիւնը,

ուրախութեամբ կը վճարէ, դրանից էլ աւել։ Եւ հարցը մի թէ փողի հարց է։ Ո՛չ, կայ աւելի ծանր, աւելի դժբաղդ արգելք — մեր յետամնացութիւնը, մենք դեռ «նօսդաղներ» ենք եւրոպական զգեստով...

*

Հայ ժողովուրդը, ինչպէս յայտնի է, մինչեւ այժմ էլ պաշտում է ծառերը, քարերը, սարերը։ Դա անչուշտ հեթանոսութեան ժամանակից մնացած մի սովորութիւն է։ Հետաքրքրական է, որ ժողովրդի պաշտամունքի առարկայ է եւ Երեւանի նահանգի Էյլաս գիւղի մօտ գտնվող մի քար, որի վրա կայ սեպաձեւ արձանագրութիւն։ Կովկասեան Աշխարհագրական ընկերութեան «Известія» անունով հրատարակութեան մէջ պ. Պագիրեվ պատմում է, որ որոնելով այդ արձանագրութիւնը, նա հանդիպեց մի թփի, որի ճիւղերին կապված էին բազմաթիւ չորի կտորներ։ Ցայտնի է, որ այդպիսի ուխտատեղիներ շատ կան մեզանում։ Հիւանդները, մեծ մասամբ կանայք, կտրում են իրանց չորերից մի փոքրիկ ծուէն եւ կապում են ճիւղի վրա, որպէս թէ այդ կտորի հետ հիւանդութիւնն էլ փաթաթում են ծառի վրա։

Հիւանդութիւններից նեղվող ժողովուրդը դիմում է Աստուծուն, դիմում է «ջառահներին», օգնութիւն եւ բժշկութիւն է խնդրում բոլոր տեղերում, որոնք նրան սուրբ են թւում։ Եւ այս քարը իր խորհրդաւոր գրութեամբ, որի մասին ոչինչ աւանդութիւն չը կայ, թւում է ժողովրդին, իր խորհրդաւորութեան պատճառով, նոյնպէս սուրբ բան. նրան էլ դիմում են օգնութիւն խնդրելու։ Այսպիսով սեպաձեւ արձանագրութիւններին տեղական ազգաբնակութիւնը վերաբերվում է ոչ միայն մի անգիտակից յարգանքով, այլ երբեմն եւ ակնածութեամբ։

Եւ դա ճիշտ նկատված մի գիծ է հայ ժողովրդի բնաւորութիւնից. ամեն մի հին յիշատակարան հայի մէջ յարգանքի եւ հիացմունքի զգացմունք է զարթեցնում։

ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐ

I

Ex Oriente lux («Արեւելքից է գալիս լոյսը»), ասում էին մի ժամանակ։

Ժամանակները փոխվել են, եւ այժմ մենք, արեւելցիներս՝ Արեւմուտքից ենք ստանում լոյսը։

Սակայն, բացի լոյսից եւ լոյսի հետ միասին Եւրոպան ուղարկում է Արեւելք եւ այնպիսի չարիքներ, ինչպէս ափիոն, «զրահաւոր բրոնզք», միսիոնէրներ եւ այլն։ Եւ Արեւելքը, որ տրամադիր էր գրկաբաց ընդունել Եւրոպայից եկած ամեն բան, հիասթափվում է եւ սկսում է զգալ դէպի Եւրոպան մի տեսակ անվստահութիւն, որ շատ հեշտ փոխվում է կատաղի ատելութեան, ինչպէս այժմ Չինաստանում։

Ո՞վ է մեղաւոր այդ բանում—Արեւմուտքը թէ Արեւելքը։ Անչուշտ Արեւմուտքը։ Այդ է բոլոր անկողմնապահ մարդկանց համոզմունքը, հիմնված հարիւրաւոր փաստերի վրա։

Ահա մի նոր փոքրիկ փաստ, իբրեւ լուսաբանութիւն։

Խմբագրութեան մէջ գրեթէ միասին ստացվեցին «Կանոնադրութիւն Սալմաստի Հայուհեաց Բարեգործական Ընկերութեան» եւ Oeuvre des écoles d'Orient-ի մայիս-յունիսեան տետրը։ Մէկը արտայայտութիւն է ասիական խաւար մթնոլորտում ապրող հայուհիների իղձերի եւ ձգտումների, միւսը եւրոպական քաղաքակրթութեան [illegible] 1—2 ցիչների «իդէալների»։

Ինչի՞ են ձգտում ասիական փոքրիկ ազգի անօգնական կանայք, եւ ինչ նպատակներ են դրել իրանց համար ֆրանսիական փառաւոր ազգի զօրեղ ներկայացուցիչները։

Սալմաստի հայ կանանց հիմնած ընկերութեան նպատակն է «օգնել՝ հայ իգական սեռի չքաւոր դասակարգի ազգային կրթութեան գործին եւ նպաստել ընդհանրապէս հայ կանանց եւ օրիորդների մէջ անհրաժեշտ արհեստներ տարածելով»։ Այդ նպատակին հասնելու համար ընկերութիւնը աշխատում է՝ 1) «բանալ զանազան գիւղերում իգական դպրոցներ, մի եւ նոյն ժամանակ օգնելով եղած իգական դպրոցներին թէ նիւթապէս եւ թէ բարոյապէս. 2) բայ անել կար ու ձեւի դպրոցներ, արհեստանոցներ եւ այլն. 3) օգնել չքաւոր ընտանիքներին նիւթականապէս կամ այլ կերպ. 4) օգնել այն անձնաւորութիւններին, որոնք կը կամենան վարժուհութեան պաշտօն վարել Պարսկաստանում, եւ 5) ժողովրդական ազէտների ժամանակ իր կարողացածին չափ նպաստել վտանգի առաջն առնելու համար»։

Այդ ծրագրով գործում է ընկերութիւնը 1891 թուից եւ կարողացել է լոյսի ճառագայթներ մտցնել ողորմելի պարսկահայուհիների խաւար թագաւորութեան մէջ։

Ինչպէս են գործում նոյն Պարսկաստանում կաթոլիկ հայրերը, որոնց օրգանն է «Oeuvre des école d'Orient»-ը։ Ահա վերջին մայիս-յունիսեան համարում առաքելական նուիրակ սրբազան Լէոնէի նամակը հայր Շարմրտանին։ Կաթոլիկ սրբազանը նոյնպէս ցանկանում է դպրոցներ բանալ Սալմաստում եւ Խոյում, բայց ոչ թէ լոյս տարածելու համար, այլ հայերին կաթոլիկ դարձնելու համար։ Դպրոցները անհրաժեշտ են, որովհետեւ ժողովուրդը գրպրոցներ է պահանջում (խեղճ ուսումնածարաւ հայ ժողովուրդ) եւ որովհետեւ դպրոցը ամենալաւ միջոցն է ժողովրդի աչխարհայեացքի վրա ազդելու համար։

Ինչո՞ւ պէտք է փոխել հայերի հաւատը։ Նրանց, այդ դարաւոր աղանդաւորների, հոգիները փրկելու համար, ասում է սրբազանը, ինչպէս ասում են բոլոր միսիոնէրները։ Այդ պատրուակ է ի հարկէ։ Միսիոնէրների իսկական նպատակը իրանց հօտերը աւելացնելը եւ իրանց պետութեան քաղաքական ազդեցութիւնը զօրացնելն է։ Եւ այդ ողորմելի նպատակի համար սրբազան Լէոնէ փող է խնդրում իր եւրոպացի հաւատակիցներից դպրոցներ բանալու եւ չքաւոր, քաղցած ժողովրդին բաժանելու համար, ուրիշ խօսքով հայ մանուկների միտքը եւ հայ ժողովրդի խիղճը պռոնկացնելու համար։ Իսկ այդ փողը հեշտութեամբ ստանալու համար սրբազան հայրը կանգ չէ առնում ամենաանամօթ սուտի առաջ. «Թաւրիզում, գրում է նա, հայերը անհամբեր սպասում են միսիոնէրներին. նրանք այլ եւս չեն ուզում տեսնել ոչ իրանց արքեպիսկոպոսին, ոչ իրանց քահանաներին... Թաւրիզի կրօնափոխութեան ժամանակը հասել է. Թաւրիզի արքեպիսկոպոսը (եպիսկոպոսը) այժմ Սալմաստումն է. Թաւրիզեցիք նախազգուշացրել են նրան, որ այլ եւս չը վերադառնայ իրանց մօտ, որովհետեւ նրանք այլ եւս կարիք չունեն ոչ կաթոլիկ եպիսկոպոսի (285 եր.)։

«Ահա միսիթարական լուրեր մի միսիոնէր եպիսկոպոսի համար, շարունակում է սրբազանը. այո՛, սիրաս մեծ բերկրանք է զգում տեսնելով, որ Նախախնամութեան ժամը կարծես զարկել է արդէն հայ ազգի համար, որ այնքան երկար ժամանակ ըմբոստ է եղել երկնային շնորհքի վերաբերմամբ, բայց մի եւ նոյն ժամանակ տխրում է սիրտս»... Սրբազանի քնքոյշ սիրտը տխրում է, որովհետեւ չը կան բաւականաչափ միսիոնէրներ, մանաւանդ դուռմարներ հայերին հաւատափոխ անելու համար։ «Ահա իմ տխրութեան պատճառը, բացականչում է սրբազանը. ես կուզէի գործել, բայց ձեռքերս կապված են կամ աւելի ճիշդ ասած դատարկ են, այժմ աւելի քան երբեւիցէ, այս սարսափելի սովից յետոյ, որ ամեն ինչ սպառել է եւ դեռ շարունակում է տառապեցնել ժողովուրդը» (286)։

Այդպէս ուրեմն սրբազանի սիրտը տխրում է ոչ թէ սովատանջների կրած տառապանքներից, այլ որովհետեւ քիչ փող կայ հայերին կաթոլիկ դարձնելու համար։ Ողորմելի՞ սրբազան։

Ահա այդպիսի նմուշներ է ուղարկում Եւրոպան Ասիա, այդպիսիներով է Ասիան գաղափար կազմում հռչակված արեւմտեան քաղաքակրթութեան մասին։ Ի՞նչ զարմանալու բան կայ, որ նա սկսում է զզվել Եւրոպայից եւ ատել նրան։

Այդպիսի սուրբ եւ սրբազան հայրերն են, անամօթ «Պարոն Կուպօնի» գործակալների հետ միացած, ցանել այն թունաւոր սերմերը, որոնցից ծլածը այժմ հնձում են Չինաստանում եւրոպացիները։

Եթէ այն ցաւալի դէպքերը, որ տեղի ունեն այժմ Չինաստանում, կը կարողանան համոզել եւրոպացիներին, որ Արեւելքին պէտք են ոչ թէ ծախու կրօնի, այլ անշահասէր գիտութեան, լոյսի եւ միմիայն լոյսի միսիոնէրներ, այն ժամանակ կարելի կը լինի գոնէ մի փոքր սիսիվել այն, մեծ մասամբ անմեղ, զոհերի համար, որոնք ընկել են եւ դժբաղդաբար դեռ ընկնելու են երկու կողմից Երկնային կայսրութեան մէջ։

Կրկնում ենք, Ասիային պէտք չեն միսիոնէրներ։ Եթէ բողոքականների եւ կաթոլիկ հայրերի մէջ կան այնպիսիները, որոնք ուզում են անպատճառ գործել Ասիայի համար, թող նրանք օրինակ առնեն ասիացիներից, Մխիթարեան հայրերից,—որոնք չը նայելով իրանց երբեմնակի սայթաքումներին, չնորհիւ իրանց օպպորտիւնիստ սկզբունքին—«Տուէք Պապինը Պապին եւ Ազգին Ազգին»,—փայլուն բացառութիւն են կազմում կաթոլիկ հայրերի մէջ եւ իսկապէս ձգտում են լոյս սփռել Արեւմուտքից դէպի խաւար Արեւելքը։

Տ. Ց.

ՆԱՄԱԿ ԵՐԵՒԱՆԻՑ

—

Յունիսի 26-ին

Այսօր ստացվեց կաթողիկոսական կօնդակը, որով պաշտօնի մէջ հաստատվում են թեմական դպրոցի նորընտիր հոգաբարձուները։ Մինչեւ հաստատութիւնը պտտում էին լուրեր, իբր թէ նորընտիր հոգաբարձուներից մէկը չի հաստատվի. մինչեւ իսկ մի քանի սեւահոգիներ աջողեցրել էին այդ կերպ տրամադրել Կաթողիկոսի դիւանագիր Կորիւն վարդապետին, որը ընտրութեան օրը այստեղ էր։ Կօնդակով հաստատվել են հոգաբարձուների պաշտօնում նաեւ երկու քահանաները, մինչդեռ նրանցից մէկը ստացել էր 23 ձայն 54 ընտրողներից, իսկ միւսը ընդամենը 16 ձայն։

«Չը կայ չարիք առանց բարիքի», ասում է ժողովրդական առածը։ Այդ առածը մտաբերեցի, երբ լսեցի, որ այսօր նոր հոգաբարձուներին հրաւէր է եղել ուղարկված եւ այդ հրաւիրաթղթի տակ երկու նշանակովի քահանաները գրել են՝ «մենք մասնակցել չենք կարող, որովհետեւ մենք մեզ ընտրվածներ չենք համարում»։ Մինչդեռ հնար չեղաւ ոչ Էջմիածնին եւ ոչ էլ Երեւանի փոխանորդին համոզել, որ եթէ ընտրողական սկզբունքը ընդունում են եւ առաջարկում ժողովրդին, այլ եւս միտք չունի սահմանափակումներով կաշկանդել ընտրողի միտքը, այդ երկու քահանաները աւելի բարձր կանգնեցին եւ աւելի տրամաբանօրէն շարժվեցին, քան մի արքեպիսկոպոս, քան Էջմիածինը, հրաժարվելով հոգաբարձութիւնից, ձայների փոքրամասնութիւնը իրանց համար վիրաւորական համարելով։ Մենք գովում ենք այդ երկու քահանաներին, որոնք իրանց վարմունքով մի գեղեցիկ դաս տուին։

Ի դէպ. «Մշակի» 116-րդ համարի մէջ տպված Դիտող ստորագրութեամբ թղթակցութեան մէջ երկու սխալ կայ։ Նախ՝ Վեհափառի մօտ գնացած պատգամաւորներին յայտնել էր, որ նրանց խնդիրքի մասին կը խորհի։ Երկրորդ՝ պատգամաւորները երբէք չեն խնդրել Կաթողիկոսից, որ նա ինքը նշանակէ քահանաներ, այլ խնդրել են ամբողջովին փոխել քահանաներ ընտրելու կարգադրութիւնը։

Այսպէս թէ այնպէս, լաւ թէ վատ, մինչեւ նոր փոփոխութիւնները առ այժմ նոր ընտրված

հսկայական աշխատասիրութիւնը, ի հարկէ, պիտի արհամարհէին ամենադաժան արգելքներն անգամ։ Այդպէս նրանք կարողացան լոյս հանել այնպիսի հրաշալի հրատարակութիւններ, որոնք նոյն իսկ այժմ, երբ տպագրութիւնը վիթխարի առաջադիմութիւններ է արել, նախանձելի են համարվում։ Այդ մեծ մարդիկ արհեստաւորներ չէին միայն, այլ եւ լուսաւորութեան գաղափարին նուիրված գործիչներ։ Երախտագիտութեան արժանի հանգամանքը այն է մանաւանդ, որ Վենետիկը միայն իտալացիների մասին չէր մտածում, այլ եւ այն ազգերի մասին, որոնց հետ նա շրջվում էր իբրեւ Միջերկրական ծովի ամենանշանաւոր առեւտրական կենտրոններից մէկը։ Այստեղ զարգացաւ սլաւոնական տպագրութիւնը, եւ երկար ժամանակ սլաւոնական աշխարհը այստեղից էր ստանում իր գրքերն ու տպարանները։ Այստեղ կար հրէական տպագրութիւն, այստեղ 15.8-ին տպագրվեց Ղուրանը արաբական լեզուով։ Եւ այսպիսով բարերարված ազգութիւնների մէջ չէին կարող չը լինել եւ հայերը, որոնք վենետիկցիների վաղեմի ծանօթներն էին։

Դեռ Ռուբինեանների ժամանակ վաճառականութիւնը վենետիկցուն տանում էր Կիլիկիա եւ հային Վենետիկ։ Այս երթեւեկութիւնը այնքան սերտ յարաբերութիւններ էր ստեղծել երկու ազգերի մէջ, որ Վենետիկում կառուցվեց «Հայոց տուն» անունով մի շինութիւն, այն էլ մի վենետիկցու կտակած գումարով։ Այդ բարերարը Մարկոս Ծիանին էր, որ շատ անգամ էր եղել Կիլիկիայում ու հարստացել էր այնտեղ. կամենալով լաւութիւն անել իր բարեկամ հայերին, նա կարգադրեց որ իրանից յետոյ մնացած կայքերը գործադրվեն յօգուտ այն հայ պանդուխտների, որոնք գրնում են Վենետիկ։ Նրա առատաձեռնութեամբ շինված «Հայոց տունը» չէն ու կանգուն էր դարերի ընթացքում. օտարութեան մէջ թափառող հայը գիտէր, որ դժերի գեղեցիկ մայրաքաղաքում պատրաստ կայ իր համար օթեւան եւ նոյն իսկ ապրուստի միջոց։ Այդքանն էլ բաւական էր, որ այդ բարեգործական հիւրանոցում միմեանց հանդիպէին վաճառականը, կրօնաւորը, ազքատը եւ առհասարակ զանազան կողմերից եկած եւ զանազան կողմեր գնացող մարդիկ։ Եւ անչուշտ «Հայոց տան» մէջ ապրողներն էին, որ օգնեցին Վենետիկի ապրուստագէտներին հայկական տառեր փորագրելու եւ ձուլելու, ինչպէս նաեւ ցոյց տուին թէ ինչ գրքեր կարող են լաւ տարածվել հայերի մէջ։

II

Այսպէս թէ այնպէս, փաստը այն է, որ XVI դարի առաջին քառորդում կար հայերէն տպագրութիւն Վենետիկի մէջ։ Եւ այդ փաստը գուցէ միակ ուրախալի, միակ յուսատու երեւոյթն էր այն ժամանակվայ հայկական կեանքի մէջ։ Մարդկային ոչ մի գիւտ այնպէս չէ արհամարհում աշխարհագրական տարածութիւնները, անջրպետներն ու սահմանները, այնքան սերտ չէ կապում ազգերը միմեանց հետ, ինչպէս մտքի եւ հոգու այն աքանչելի գործիքը, որ տպարանն է։ Իտալիան 1513-ին հինգ գիրք տուեց հայերին. հաշուելով որ իւրաքանչիւր գրքից տպագրված է 300-ական օրինակ (այս թիւը սովորական էր այն ժամանակվայ հրատարակութիւնների համար), մենք կը ստանանք 1500 օրինակ։ Դա մի ամբողջ հոսանք էր. Իտալիան մի փոքրիկ պատուհան էր բաց անում դէպի Հայաստան։ Բաւական է միմեանց կողքի դնել այդ երկու երկիրները—Իտալիա եւ Հայաստան, եւ պարզ կը լինի, որ Հայաստանի բարի հրեշտակն էր այդպէս կարգադրել—հայկական տառեր իտալական հողի վրա։

Իտալիան մի ճրագ էր ամբողջ Եւրոպայի համար։ Այստեղ ծագեց նոր ժամանակների, նոր մարդկութեան արշալոյսը, որ սկսեց հալածել միջնադարեան խաւարը, թաղեց վանքի ու ճգնաւորութեան գաղափարը եւ մարդուն կանգնեցրեց ինքնաճանաչութեան հողի վրա, սովորեցրեց նրան լինել հպարտ իր խիզախ, որոնող, տարբերուածող հոգով, լինել հողի եւ իրականութեան զաւակ, ազատ ու ինքնակամ անհատ։ Այստեղ Դանտէն, առաջնորդվելով իր աստուածային Բէաթրիչէի սիրով, հրաշակերտեց «Աստուածային կատակերգութիւնը»։ Այստեղ Պետրարկան երգեց իր Լաուրային, իր Իտալիան, մի եւ նոյն ժամանակ որոնելով հեթանոս հանճարներին, որոնց գործերը կղերականութիւնը թաղել էր փոշիների մէջ. գտնելով մի տեղ Հոմերոսը, նա ուրախութիւնից եւ յուզմունքից լաց էր լինում. նրա օրինակին հետեւեցին հարիւրաւոր մարդիկ, որոնք վանքերի անարգ գերութիւնից ազատեցին հին Յունաստանն ու Հռոմը։ Այստեղ Բոկկաչիօն ստեղծեց գեղարուեստական վէպը, ստեղծեց նաեւ գրական լեզու. նրա հռչակաւոր «Դեկամերոնը» ահագին ազդեցութիւն գործեց եւ այսօր էլ դեռ մեռած չէ, կարդացվում է մեծ խորժակով։ Այստեղ Մատթէօ Բօյարդօ եւ Լուդովիկո Արիոստօ Ռոլանդի դիւցազնական վէպը ստեղծագործեցին, մէկը՝ սիրահարված Ռոլանդի, միւսը կատաղի Ռոլանդի։ Այստեղ էին Միկէլ—Անջէլօ (քանդակագործ), Լէոնարդօ-դա-Վինչի, Ռաֆայէլ (նկարիչներ)։

Որքան մեծ անուններ, որպիսի հանճարներ միմեանց ետեւից կամ միաժամանակ։ «Իտալիայի գիւտը—ասում է Միշլէ—XVI դարի համար աւելի մեծ նշանակութիւն ունէր, քան Ամերիկայի գիւտը»։ Նրա տատամ ու մաքուր լոյսերից ազգերը լիաբուռն բաժին էին վերցնում իրանց համար։ Գերմանիան աշակերտեց նրան վերածնութեան շարժման մէջ։ Ֆրանսիան պատերազմներ էր մղում Իտալիայի դէմ եւ թէեւ յաղթեց այս բաժան-բաժան դարձած երկիրը, բայց յաղթված իտալացիներն էլ նրա աճեցին յաղթողներին իրանց մտաւոր հարստութեամբ։ Իտալիայի ազդեցութեան տակ մեղմացան ֆրանսիական բարքերը, ծաղկեց ֆրանսիական գրականութիւնը, պահելով, սակայն, իր ազգային ինքնուրոյնութիւնը։ Իտալական ազդեցութիւնը ուժեղ էր Սպանիայում եւ Լեհաստանում. նոյն իսկ Անգլիայի պէս ինքնուրոյնութիւն սիրող առաջաւոր երկրում իտալական քանաստեղծները օրինակ էին, նմանողութեան առարկայ։

(Կը շարունակվի)

հոգաբարձութիւնը ժանում է իր պաշտօնի մէջ։ Ինչ որ ժողովրդից եւ պատգամաւորներից կախված էր, արեցին, այժմ մնում է, որ այսքան աղմուկներից եւ կռկռոցից յետոյ նրանք արդարացնեն մեր ժողովրդի յոյսերը։ Ընտրութիւնների մէջ ժամանակցող երիտասարդութիւնը ոչ մի անձնական շահ չէ ունեցել, այս կը խոստովանվեն նաեւ մեր հակառակորդները։ Եթէ այսքան ջանքեր եղան, պատճառը թեմական գպրոցի ընկած դրութիւնն է, որից դուրս բերելու եւ պատուաբեր բարձրութեան հասցնելու պարտքը այսօր ծանրանում է նոր հոգաբարձութեան վրա։

Ա.—Դ.

ՆԱՄԱԿ ԻԳԴԻՐԻՑ

—

Յունիսի 24-ին

Սկսվել են արդէն մեր ժողովրդի ամենածանր օրերը։ Կարկի աղէտից յետոյ վրա հասաւ չոքը. ջուր չը կար, ցամաքեցին ցորենի հասկերը, ցած բարձրակը թողեց իր մատաղաշ տերեւները, բոստանը իր այրված մաշը վեր ցցելով, ողբում էր իր թշուառ դրութիւնը, եւ քանդում խեղճ գիւղացու, առանց այն էլ, կոտրվածքայքայված սիրտը, կոտրում նրա մէջքը։

«Ջուր չը կայ, ցանքերը հող-մոխիր դարձան, փչացաւ մեր ողջ տարվայ յոյսն ու ապաւէնը»։ Ահա այն օրերում տիրող հառաչները, հառաչներ, որ կարող էին ծնել եւ՝ տուրդմրոց, եւ՝ անհաւութիւն, եւ՝ մինչեւ անգամ մարդասպանութիւն։ Այդ բոլորն էլ տեղի էին ունենում միշտ, ամեն օր, ամեն ժամ. խեղճ գիւղացին ստիպված ծախում էր իր աչքի լոյսը, իր թեւ-թիկունքը՝ եզը, գոմէշը, իր ընտանիքի կերակրի միակ աղբիւրը՝ կով, ոչխարը, եւ դրանց գնով առնում էր մի փոքր ջուր, այն էլ ինչ աղերսանքով, որպէս զի կարողանայ ազատել մի կերպ իր ընտանիքի ամբողջ տարվայ պաշարը։ Ո՞վ էր տեսել, որ ջուրը ծախվի, այն էլ այն մարդկանց ձեռքով, որոնք իսկապէս պիտի հսկեն, հաւասար բաժանեն ջուրը բոլոր գիւղերի վրա. ո՞վ էր տեսել, որ ջրի համար մարդ սպանեն, բայց այս տարի մեր դժբաղդ ժողովուրդը դրանց եւս ականատես եղաւ։

Սրանից երեք օր առաջ մի դիակ գտնվեց, որը ծալած, երկու տակ արած, դրած էր բանդի առաջ, տիզմի մէջ խրած (բանդ կոչվում է այն տեղը, որտեղից մեծ առուի առաջ կարում են, որ ջուրը գնայ նրա աջակողմեան եւ ձախակողմեան փոքր առուները), եւ այդ թշուառ մարդը ծառայել է որպէս մի խուրձ խոտ՝ ջրի առաջը կտրելու համար։ Արդէն չարագործները, մարդասպանները բռնված են։

Մեր գիւղական տարրին վիճակված են այսպիսի դաժան օրեր։ Ո՛րը խիստ կարիքից ստիպված, ո՛րը չոքի ձեռքից ազատվելու համար, չսպասեց քաղել իր դեռ եղան—չը հասած ցորենը, սկսեց կալ կալսել, բայց դեռ մի քանի օր չանցած, վրա հասան յորդառատ անձրեւները, հակառակի պէս հէնց այն ժամին, երբ ոչ մի կերպ չէ կարող օգտակար լինել արաւնի ջրովի ցորեններին, այլ միանգամայն արգելք եղաւ կալ կալսելուն։ Ահա մի չարաթ է ինչ կապոյտ երկնքի եւ արեւի երես չենք տեսել. անընդհատ անձրեւներ են գալիս. ասում են, որ կալերում փռած ցորենը արդէն սկսել է ծաղկել։ Մռայլ է բնութիւնը եւ չէ ուզում ժպտալ խեղճ, աղէտներից լիացած ժողովրդի երեսին, որը ժպիտը նրան կեանք կը պարգեւէ, բայց երկինքը այդ չէ անում, նա անգութ է։

Մարդ մտածում է, մթթէ գիւղական ժողովրդից աւելի դժբաղդ, անիծված տարր կայ. ամեն պատահար, ամեն աղէտ, ամեն հոգս—չարչարանք՝ նրա գլխին են հաւաքված։ Արդեօք նա էլ պիտի արժանանայ անդորր, աղէտից հեռու կեանքի. գիւղական առանձնայատուկ, խոր կնճիռները մի օր պիտի տեղի տան փայլուն, ժպտուն դէմքի...

Ե. Ֆրանգեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Մայրաքաղաքի լրագիրները հաղորդում են, որ պարսից Շահը Պետերբուրգ կը գայ յուլիսի 4-ին։

—

Ներկայ աշնանը դիտաւորութիւն կայ Կովկասում ծառայող հարկային տեսուչներին հրաւիրել ժողովների՝ քննելու հարկի բարեկարգութեան խնդիրները։

—

Մեզ հաղորդում են, որ Պարոնեանի «Մեծապատիւ մուրացկանների» երկրորդ տպագրութիւնը, որ ձեռնարկել էր Թիֆլիսի հայոց Հրատարակչական ընկերութիւնը երեք տարի սրանից առաջ, արդէն սպառվել է եւ ընկերութիւնը ձեռնարկել է երրորդ տպագրութեան։ Եթէ նկատի ունենանք, որ Պարոնեանի այդ աշխատութիւնը սկզբում լոյս է տեսել մի անգամ Կ. Պոլսում, ներկայ նոր տպագրութիւնը պէտք է համարել չորրորդ տպագրութիւն։ Շատ ուրախալի է, որ մեր մէջ էլ պատահում են գրական աշխատութիւններ, որոնք արժանանում են այդքան անգամ տպագրութեան։

—

Երկրաշարժի երեւոյթներ շարունակվում են նկատվել Փոքր-Ասիայի զանազան կողմերում եւ մանաւանդ Այդընի շրջակայքում։ Ինչպէս յայտնի է, այնտեղի վնասվածների համար բացված էր հանգանակութիւն, որ ներկայումս հասնում է մերձաւորապէս $4^1/_2$ միլիոն ղրուշի։

—

«Մշակի» ներկայ համարից սկսում ենք տպագրել մեր աշխատակից Լէօի «Հայկական Տպագրութիւն» անունով աշխատութիւնը։

—

Կատաղած շան յարձակումներին ենթարկված անձինք, որոնք ապրում են կենտրոնական քաղաքներից հեռու, անկարող են լինում բժշկվել, որովհետեւ նրանց շրջանում չը կան հաստատված Պաստեորի բուժարաններ։ Ցանկանալով օգնել այդ մարդկանց, կառավարութիւնը որոշել է խուզ եւ կենտրոններից հեռու տեղերի երկաթուղիների որոշ կէտերում հիմնել պաստեորեան բուժարաններ։

—

Աչքի առաջ ունենալով, որ ամեն տարի ցանքերի տարածութեան մասին մանրամասն կերպով տեղեկութիւններ ժողովելը դժուար մի գործ է, որ պահանջում է շատ աշխատող ոյժեր եւ դրամական նպաստներ, մինիստրութիւնը որոշել է նոյն տեղեկութիւնները ժողովել պարբերաբար, իւրաքանչիւր հինգ տարին մի անգամ։

—

ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻՑ մեզ գրում են. «Մի շաբաթ է, որ սկսվել է գարու հունձը եւ գարու գինը յանկարծ իջաւ խալվարը 40 բուբլուց 24 բուբլու, իսկ այսօր վաճառվեց 20 բուբլիով։ Ցորենի արտերն այս տարի թէեւ մեծ առատութիւն են խոստանում, սակայն բերքն այնքան էլ աջող չը պէտք է սպասել, որովհետեւ ցորենների մէջ երեւում է մեծ քանակութեամբ մ ր ո ւ կ կոչված հիւանդութիւն»։

—

«Новое Время» լրագրին հեռագրում են Սիմֆէրօպոլից, յունիսի 24-ին, որ առանձին յանձնաժողովը աւարտեց Սիմֆէրօպոլի բարեգործական հիմնարկութիւնների քննութիւնը։ Երեւան են հանվել քրէական յատկութիւն ունեցող ապշեցնող փաստեր։ Գործը յանձնված է նահանգական վարչութեանը։

—

ՀԻՆ-ՆԱԽԻՋԵՒԱՆԻՑ մեզ գրում են հետեւեալը. «Այս տարի Նախիջեւանի գաւառում բերքը, աջող անձրեւների շնորհիւ, սպասածից աւելի առատ է։ Խաղողի այգիները եւ ծառերը ծանրաբեռնված են առատ եւ առողջ պտուղով։ Մայիս ամիսն անցաւ առանց որ եւ է պատահարի եւ մթնոլորտային վնասակար երեւոյթների։ Երկրագործի համար մայիս ամիսը Նախիջեւանում ամենավտանգաւոր ամիսն է.—տարի չէ անցնի, որ սաստիկ քամիներ, կարկուտ, բոյսերի ցրտահարութիւն (չախտա), թոզ եւ այն տեղի չունենայ այդ ամսում։ Բայց ահա յունիս ամսումն ենք։ Զը նայած բերքի անսպասելի առատութեան, թանգ է ամեն բան.—ցորենի պուդը—1 ր. 80 կ.—2 ր., գարին—1 ր. 60 կ., կարագ իւղը—12 ր. պուդը, պանիրը—4 ր.—5 ր., մսի ֆունտ 8 կոպէկ։ Այդ պայմաններում հասարակ դասակարգի ազգաբնակութեան դրութիւնը անտանելի է եւ ողորմելի, իսկ մուրացկանների թիւը անհամար։ Աւելորդ չէ յիշել, որ հացը բնականաբար չէ թանգացել եւ այդ գնին հասել. դրան արհեստականապէս նպաստել են առեւտրականները եւ չոմարանատէրերը, որոնք աշնանը ցորենը ամբարել են եւ այժմ քիչ-քիչ վաճառում են։ Նրանք ձմեռային ամիսներում օրեկան մի երկու տոպրակ ուղարկում էին շուկան եւ որոշ տեսակի անձնաւորութիւններ կան, որոնք նոյն ցորենը կամ անձամբ կամ կողմնակի մարդու միջոցով, գնում էին մ ա զ ա ն դ ա յ ի ց 5—10 կոպէկ աւելով։ Այդպէս պարբերաբար վարվելով եւ ողորմելի մի քանի տոպրակ ցորենը հարիւր անգամ շուկան ուղարկելով եւ տուն տանելով՝ այսօր նոյն ցորենը, որ աշնանը վաճառվում էր 1 ր.—1 ր. 10 կ., բարձրացել է մինչեւ 2 ր.։ Թէեւ աշնանը քաղաքն իր հաշւով գնեց մօտ 6,000 պուդ ցորեն, ամբողջ ձմեռը պահեց, որպէս զի գարնանը հացի թանգանալու առաջը փակէ, սակայն չը կարողացաւ իր նպատակին հասնել։ Դեռ գարնան սկզբին այդ պահեստի ցորենը ամբողջովին բաժանվեց հացթուխների վրա 2—3 հարիւրական պուդերով, որոնք դեռ աշնանը իրանց պաշարը ժողոված լինելով, այդ ցորենի մեծ մասը սպառեցին շուկայում, վերոյիշեալ «ծախել-առնելու» սիստեմով եւ ցորենը թանգանալու հետ միասին պահանջեցին բարձր տակսա։ Այսօր թխած հացի առաջին տեսակը $5^1/_2$ կոպէկ է, իսկ երկրորդ տեսակը՝ 4—$4^1/_2$ կոպէկ։ Կենսական ոյժերքների թանգութեան պատճառով, վաճառականները սաստիկ գժգոհ են իրանց վիճակից։ Զեռքերը ծալած նստել են»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՉԻՆԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

—

Պետերբուրգից «Русск. Вѣд.» լրագրին հեռագրում են յունիսի 25-ին. «Պետերբուրգի չինական դեսպանութեան մէջ մինչեւ այժմ անմիջական տեղեկութիւններ չը կան Զինաստանից։ Դեսպանութեան մէջ գիտեն միայն այն, ինչ որ տպագրվում է արտասահմանեան եւ ռուսաց լրագիրներում։ Քաղաքում եւ բարձրագոյն առաջվայ պէս յուզիչ լուրեր են պրտրտում. ասում են, որ մասնաւոր բանկերից մէկը հեռագիր է ստացել, թէ չինական ապըստամբները, նախ քան օտար պետութիւնների դեսպանատների անդամներին, նրանց կանանց եւ երեխաներին կոտորելը, սաստիկ տանջանքներին ենթարկեցին նրանց, բաւականաչափ անարգանքներ թափելով օտարազգի ներկայացուցիչների վրա. ապստամբները եռացրած ջուր թափելով նրանց վրա, սկսեցին գլխները կտրել։ Պէյխօ գետը լիքն է իբր թէ օտարազգիների գլխատված դիակներով։ Զինաստանում ապրող օտարազգիների մէջ կատարեալ սարսափ է տիրում։

Արտասահմանեան եւ մայրաքաղաքի լրագիրներում բազմաթիւ մանրամասնութիւններ կան Պէկինի անցքերի մասին, բայց դժուար է ասել թէ որքան ճիշդ են դրանք, որովհետեւ ստուգել չէ կարելի։ Ահա ինչ են հաղորդում Շանգհայից «Central News» լրագրին.

«Չինական պաշտօնական հաղորդագրութիւնները հետեւեալ կերպով են նկարագրում անցքերը մինչեւ յունիսի 14-ը (27)։ Այդ ժամանակ Պէկինում ողջ էին մնացել միայն երկու դեսպանատներ. մնացած բոլոր դեսպանութիւնները չինացիների ձեռքն էին անցել։ Գեներալ Իւնգլու շատ անգամ դիմեց պրինց Տուանին՝ խնդրելով պաշտպանել եւրօպացիներին, բայց իզուր։ Ինքն Իւնգլու վիրաւորանքների ենթարկվեց փողոցում, եւ ամբողջ քաղաքում անիշխանութիւն տիրեց։ Բռունցքականները անարգել կերպով անկարգութիւններ են անում, եւ պրինց Տուան մատը մատին չէ խփում վերջ դնելու իր կողմնակիցների անօրէնութիւններին։»

Այդ մի եւ նոյն բանը հաստատում է եւ «Daily Expresse» լրագիրը։ Լրագրի խօսքով, Պէկինից՝ սըր Ռոբերտ Գարտից Շանգհայ եկած սուրհանդակը հաղորդեց, որ յունիսի 13-ին յուսահատական էր օտարազգիների դրութիւնը չինական մայրաքաղաքում։ Փակվելով անգլիական դեսպանատան մէջ, նրանք ամեն ջանք գործ էին դնում՝ չինական զօրքի սարսափելի կրակին դիմանալու համար, որովհետեւ նրանք բոպէ առ բոպէ սպասում էին օգնութեան գալուն։ Նրանք միայն երբեմն երբեմն պատասխանում էին չինացիների կրակին, որովհետեւ պատերազմական ոյժերքները սպառվելու վրա էին։ Կանայք մնում էին սովից, որովհետեւ իրանց ստացած բաժինների մեծ մասը տալիս էին երեխաներին։ Սուրհանդակը կարծում է, որ օտարազգիները երկար չեն կարող դիմանալ, որովհետեւ չինացիները վճռել են օդը թունել անգլիական դեսպանատան պատերը։ Պրինց Տուան հրատարակեց հրովարտակ, որի մէջ յայտնում է, որ երեք դեսպան արդէն սպանված են, եւ որ նոյն վիճակին պէտք է ենթարկվեն եւ բոլոր մնացածները։ Չինական իշխանութիւնները ամեն միջոց գործ դրեցին, որպէս զի արգելեն օտարազգիներին որ եւ է յարաբերութիւն ունենալ արտաքին աշխարհի հետ։ Քաղաքային բոլոր դռների մօտ կանգնեցրած էին պահապաններ, որոնք բռնում եւ սպանում էին եւրօպացիների ուղարկած սուրհանդակներին եւ խլում էին հեռագիրները, որոնց մէջ օտարազգիները օգնութիւն էին խնդրում։ Գարտի սուրհանդակն անցաւ միայն այն բանի շնորհիւ, որ իր շորերը արնոտեց եւ ուրիշների հետ միասին աղաղակում էր՝ «մահ օտարազգի սատանաներին»։ Ճանապարհին նա շատ եւրօպացիների դիակներ տեսաւ Սէյմուրի զօրաբաժնից, որոնք սպանված էին Լանֆանի եւ Լօֆի միջեւ։ Բոլոր դիակները սարսափելի այլանդակված էին։ Բռունցքականները օտարազգիների գլխներն անջատում էին ընրից եւ տանում էին բաժնուկի փայտերի վրա անցկացրած»։

«Daily Mail» լրագրի Շանգհայի թղթակիցը հաղորդում է այն երեք հրովարտակների բովանդակութիւնը, որ պրինց Տուան հրատարակել է Պէկինում։ Առաջին հրովարտակի մէջ, յունիսի 8-ից (21), նա հրամայում է Դեղին գետից դէպի հարաւ գտնվող բոլոր նահանգների փոխարքաներին՝ նաւատորմ գումարել եւ յարձակվել օտարազգիների նաւատորմի վրա։ Երկրորդ հրովարտակով, յունիսի 9-ից, յայտարարվում է, որ թագաժառանգի հայր պրինց Տուան եւ զինուորական մինիստր Կանգ-ի իրանց վրա առան բռունցքականների գլխաւոր հրամանատարութիւնը։ Երրորդ հրովարտակը, յունիսի 10-ից, հրամայում է դեսպաններին հեռանալ Պէկինից 24 ժամում, որից յետոյ դեսպանութիւնները պէտք է կնքվեն եւ նրանց դրօշակակոթերը սղոցվեն։

«Դալցիէլի բիւրօն» հաղորդում է, որ պրինց Տուան շնորհեց չքանշաններ եւ դրամական մեծ պարգեւներ բռունցքականների բոլոր պարագլուխներին եւ օֆիցէրներին, որոնք յետ մղեցին Սէյմուրի զօրաբաժինը. բոլոր զինուորներին նոյնպէս տրված են դրամական պարգեւներ։

„ՄՇԱԿԻ" ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

29 յունիսի

ՄՕՍԿՎԱ, յունիսի 26-ին։ Մաժնոսվի գործը։ Էկսպէրտները տալիս էին իրանց եզրակացութիւնները աւելի քան 40 հարցերի մասին։ Եարօսլավեան ճանապարհի դրամարկղից փոխադրված է Նէվսկի գործարանին 9 տարվայ ընթացքում 13 միլիոն. առ 1896 թիւը փոխադրած գումարը գործարանի պատէրից 2 միլիոնով աւելի էր. գործարանի վերջնական պարտքն է 8 միլիոն։ Էկսպէրտները գտան, որ հաշւին ենթակայ գումարները, որ ստանում էին վարչութեան անդամները եւ Կրիվօշէին, ճանապարհի կարիքների համար չէին։ Միջազգային բանկի հետ հաշիւները էկսպէրտները օնկալ համարեցին։ Նէվսկի գործարանի գնահատութիւնը էկսպէրտները կանոնաւոր համարեցին. ճանապարհի հաշւարարութիւնը անկանոն էր տարվում։

ՎԱՇԻՆԳՏՈՆ։ Պետական քարտուղար Գէյ եւ գերմանական դեսպանը ստորագրեցին համաձայնութիւն, որով գերմանական ներմուծմանը մաքսային այնպիսի դիւրութիւններ կը տրվեն, որպիսիք վայելում են ուրիշ երկիրները։ Մակ-Կինլէյ շուտով մի հրովարտակ կը հրատարակի, որով գործադրութեան մէջ կը դրվեն պակասեցրած տարիֆները։

ԵՕԿՕՀԱՄԱ։ Կաբինէտը խորհրդակցում է ամեն օր. կարծում են, որ քննվում է կրկին մի դիվիզիա Զինաստան ուղարկելու հարցը։

ՎԱՇԻՆԳՏՈՆ։ Ծովապետ Բէմէի հեռագիրը Զիֆուից, յունիսի 27-ից. «Երէկ ես եկայ այստեղ։ Իններորդ հետեւակ գնդի երկու բատալիոն եւ ծովային հետեւակ զօրքի մի բատալիոն այսօր ափ են իջեցրված՝ Տեանցզին գնալու համար։ Հէնց նոր իմացայ Սէյմուրից, Տեանցիցինից, որ օտարազգիները շատ նեղված են։»

ՎԻԵՆՆԱ։ Դէպի Իտալիան տանող ճանապարհի վրա, Բիզէնց կայարանի մօտ, սրտի պայթումից յանկարծամահ եղաւ փոխ-ծովապետ Ֆէդոտով. մարմինը Օդէսա կը բերվի։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ «Правительственный Вѣстникъ» լրագրում տպված է. «Ուսսուրեան երկրի Նիկոլսկից հաղորդում են յունիսի 22-ից, որ, լուր է պտտում, թէ Մուկդէնում սպանված է ֆրանսիական եպիսկոպոսը եւ այրված է միսսիան»։

ՏԵԱՆՋԻՆ։ Զափազանցրած լուրեր են պըտրտում այն բանի մասին, թէ բռունցքականների հրոսակախմբեր են երեւացել Տէլինում եւ ագիտատորներ խարբինում։ Տէլինի չինական տիֆանգուանը երկաթուղիական բաժնի գլխաւորին յայտարարութիւն ուղարկեց, որի մէջ տեղեկացնում է ազգաբնակութեանը, թէ բռունցքականները եւ նրանց հետեւողները մահվան պատժի կենթարկվեն. իսկ իրապէս,

ըստ երեւոյթին, միջոցներ չեն առնվում նրանց դէմ։ Ապստամբ հրոսակախմբերը ստիպեցին այն անգլիացիներին, որոնք բանում էին քարածուխի հանքերում Զինաստանում, հեռանալ այստեղից։ Գիրքինում, ստացված տեղեկութիւնների համեմատ, ընդհանուր սարսափ է տիրում. վախենում են ապստամբութիւնից։ Երկաթուղիական հեռագրաթելը դէպի հարաւ ընված էր, այժմ ուղղված է։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԷԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

(Ժամերը Պետերբուրգի հաշով)
տարբերութիւնը 58 բոպէ։

—

№ 5 գնացքը:		№ 3 գնացքը:	
Բաղուից դուրս է գալիս ցեր.	4 ժ. 1 ր.	գիշ.	11 ժ. 29 ր.
Թիֆլիս է հասնում առ.	8 » 53 »	եր.	5 » 34 »
Թիֆլիսից դուրս է գալիս »	9 » 32 »	եր.	6 » 34 »
Բաթում է հասնում եր.	9 » 1 »	առ.	7 » 14 »

№ 6 գնացքը:		№ 4 գնացքը.	
Բաթումից դուրս է գալիս առ.	7 ժ. 50 ր.	եր.	7 ժ. 59 ր
Թիֆլիս է հասնում եր.	7 » 15 »	առ.	8 » 42 »
Թիֆլիսից դուրս է գալիս »	7 » 18 »	»	10 » 05 »
Բաղու է հասնում ցեր.	12 » 10 «	»	5 » 16 »

արագ գնացք

Թիֆլիսից դուրս է գալիս. . . .	ցեր.	11 ժ.	19 ր.
Բաթում է հասնում.	երեկ.	9 »	41 »
Բաթումից դուրս է գալիս. . . .	գիշ.	11 »	18 »
Թիֆլիս է հասնում.	առաւ.	9 »	30 »

—

Թիֆլիսից դէպի Կարս դուրս է գալիս.	երեկ.	9 ժ.	—
Ալէքսանդրոպոլ հասնում է . . .	առ.	7 »	46 ր.
Կարս հասնում է	ցեր.	12 »	56 »
Կարսից դուրս է գալիս	ցեր.	3 »	29 »
Ալէքսանդրոպոլից դուրս է գալիս .	երեկ.	8 »	35 »
Թիֆլիս հասնում է	առ.	7 »	15 »

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ

(Կուկիա, Վօրոնցովի արձանի հանդէպ)
ամեն օր, բացի կիրակի օրերից։
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝

Բ. Ա. Նաւասարդեան—11—12 ժ. վիրաբուժութեան, վեներական (սիֆիլիս) և միզասեռ. հիւանդ.
Կ. Մ. Զիկօվանի—9—10 ժ. աչքի, ներքին և նեարդային հ.
Զ. Ի. Թաբանասեանց—11—12 ժ. կանանց և երեխայոց հիւանդ.
Կ. Ի. Գզէլիով—12½—1½ ժ. ականջի, կոկորդի և քթի հ.
Ա. Պ. Կարապետեանց—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.

ԵՐԵԿՈՆԵՐԸ

Բ. Ա. Նաւասարդեան—7½—8 ժ.
Վճար 50 կ. չքաւորները ձրի։ Համախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։
Օ. Ց. Առվանիտակի—տանը. ծաղկահատ և բժշկական մարմնամարզ. դիմել 11—1 ժ.։
Հիանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆ

Շաբաթ, յուլիսի 1-ին 1900 թ., պ.պ. անդամների, կանդիդատների, նրանց ընտանիքների եւ երեխաների համար։

Բալալայկաների վրա նուագող խումբը կը տայ

ԿՕՆՑԷՐՏ

Կապելմէյստէր Լոյկո։ Սկիզբն է երեկոյեան ժամը 8-ին։ Մուտքը ձրի։ 2—2

ԲԺՇԿԱՊԵՏ

ՍԱՄՈՒԷԼ ԶԱՀՊԱՐՈՆԵԱՆԸ

ամառս հիւանդներին ընդունում է Բօրժոմում. Анастасіевская, дача Хитарова. 4—10

Բժիշկ Գ. Գ. Մեհրաբեանի

Թիֆլիսից բացակայելու պատճառով հիւանդների ընդունելութիւնը դադարեցնում է մինչեւ սեպտեմբերի 1-ը։ 1—2

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Տարւոյս սեպտեմբերին լինելու է Ներսիսեան հոգեւոր դպրոցի համար հոգաբարձուների ընտրութիւն, ուստի պատիւ ունեմ յայտնել Թիֆլիսի բ. մասի պ.պ. ծխականներին, որ իւրաքանչիւր տան միայն աւագագոյնը, որի տարիքը 25-ից պակաս չէ, եթէ մոռացմամբ անունը չէ գրել տուել իր ծխատէր քահանայի ցուցակում՝ թող չտապէ գրել տալ մինչեւ օգոստոսի մէկը։

Գործակալ բ. մասի Թիֆլիսի՝
2—6 (չ) Գրիգոր քահ. Մանդակունի

ԴՊՐՈՑ
տիկ. Կատ. Լիսիցեանցի

երկու սեռի մանուկների համար։ Միատեղ պարապմունք իր հարազատ երեխաների հետ։ Ընդունելութիւնը՝ սահմանափակված։ Սեպտեմբերից բացվում է նաեւ պանսիօն։ Դիմել—օգոստոսի 26-ից—Բեհբութեան փողոց (նախկին Սադովայա), սեփ. տ. № 29)։ (եչ.) 6—25

ТРЕБУЙТЕ ВЕЗДѢ
КАКАО
С. СІУ и К°
ФАБР.
МОСКВА.
(չ.) 2—52

Պետերբուրգի բժշկական վարչութեան թոյլատրութեամբ։ Մեծ արկղիկը 5 ռուբլի, փոքրը—3 ր. և 1 ր. 50 կ.։

ՖԻՖԼԻՍԻՆ

ՆՈՐ ՄԻՋՈՑ

մազերը բուսցնելու և ամրացնելու համար, ոչնչացնում է թեփը։ Դուրս է եկել նաեւ բոլորովին նոր միջոց

ՁՈՒԻ ԿԱԹԸ

երեսին քնքշութիւն և սպիտակութիւն տալու համար, ոչնչացնում է արևի պատճառած սեւութիւնը, մունները, տալիս է կայուն քնքշութիւն և սպիտակութիւն։ Այդ գները չափաւոր են. մեծ սրուակը, արկղիկի մէջ, 2 ռուբլի, փոքրը—1 ր. 50 կ. Ծախվում են բոլոր պարֆիւմերական և դեղավաճառական խանութներում։ Գլխաւոր պահեստը գտնվում է Պետերբուրգում, Գուչկինսկայա փողոց տ. № 15, բնակարան № 12. պահեստի բաժանմունքները գտնվում են. Թիֆլիսում կովկասեան դեղատան ապրանքների վաճառման ընկերութեան խանութում՝ Երևանեան հրապարակ և նրա բաժանմունքում, Միքայէլեան փողոց և Բաղում. նաև Միքայելեան կամուրջի վրա, Պապովի և Արիստակովի դեղատներում։ Օտարաքաղաքացիների պատուէրները կատարվում են անմիջապէս՝ պոստով։
88—100

Յուլիսի 3-ից մինչեւ 12-ը

Յուլիսի 3-ին, 4-ին, 5-ին, 6-ին, 7-ին, 8-ին, 10-ին եւ 11-ին
Ընդունված սովորութեան համաձայն, տարին մի՛ անգամ

Պ. Ս. ԴՕՐՕԺՆՕՎԻ

խանութում
Սօլոլակկայա փողոց, ա. Գուրգենովի, տէլէֆոն 583
ՄԵԾԱԳԱՆԱԿ ԷԺԱՆԱԳԻՆ ՎԱՃԱՌՈՒՄՆ
Ահագին զիջումով նախկին գներից, ռուբլիին 25%-ից մինչեւ 40%
կը վաճառվեն ամեն տեսակ քաթանէ ապրանքներ

ՍԱՐԱՏՕՎԵԱՆ ԱՐՊԻՆԿԱ

Կիսէյա, պիկէ, բատիստ, մետաքսէ չէ-սու-չա, պատրաստ փոխնորդ մարդկանց եւ կանանց, վերմակներ ամարային եւ տաք թաւիշէ գորգեր եւ սփռոցներ, վարագոյրների տիւլ (մնացորդներ)։

Վաճառման կարգը մինչեւ յուլիսի 12-ը հետեւեալն է. խանութը բաց կը լինի առաւօտեան ժամի 9-ից մինչեւ 2-ը, ժամի 2-ից փակ կը լինի մինչեւ 5-ը եւ բաց կը լինի ժամի 5-ից մինչեւ 8-ը։

Ծանօթութիւն. Մեծաքանակ վաճառման ժամանակ ապրանքը ծախվում է միմիայն կանխիկ դրամով։ 1—4

Թիֆլիսի Կենտրոնական գրավաճառանոցում

ծախվում են հետեւեալ նոր գրքերը՝

1901 Ս. Էջմիածնի 16-րդ դարադարձը, Թիֆլիս, 1900 թ. գ. 25 կ.։
Ալբերտ Է., Հոգին եւ ուղեղը, Մոսկ. 1899 թ., գ. 15 կ.։
Արծրունի Վ., բժ., Թշուառների բարեկամ բժիշկ Հտաղ, Թիֆլիս, 1900 թ. գ. 20 կ.։
Ալիշան, Կամենից—Տարեգիրք Հայոց Լեհաստանի եւ Ռումենիոյ, Վենետ. գ. 1 ր. 50 կ.։
» Հին հաւատք կամ հեթանոսական կրօնք հայոց։ Վենետ, գ. 1 ր. 50 կ.։
» Հայ Վենետ կամ յարընչութիւնք Հայոց եւ Վենետաց, Վենետիկ, գ. 1 ր. 50 կ.։
Աբեղեան Մ., Հայոց լեզուի ուղղագրութիւնը, Թիֆլ. գ. 50 կ.։
Բժշկեան, Առակք Եզովբոսի, 5-րդ տպ. Վենետ. գ. 2 ր.։
Խաչատուր Աբովեանի երկերը, հեղինակի պատկերով, Մոսկվա, գ. 1 ր.։

Դիմել՝ Тифлисъ, Въ Центральную Книжную Торговлю. (չ. հ.) 1—2

Ֆինանսների մինիստրի քողարկութեամբ
ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ

(Баку, Прачешная, домъ Теръ Ованесова)

Կուրսերի նպատակն է տալ ունկնդիրներին մասնագիտական-առեւտրական կրթութիւն եւ պատրաստել հմուտ հաշուապահներ։ Աւարտողներն ստանում են ատեստատներ։ Կուրսերում ուսանվում են՝ 1) Առեւտրական թուաբանութիւն եւ թուաբանութիւն համրիչի վրա. 2) Հաշուապահութիւն՝ արդիւնաբերական-գործարանական, առեւտրական եւ բանկային. 3) Առեւտրական թղթակցութիւն. 4) Առեւտրական տնտեսագիտութիւն. 5) Առեւտրական եւ մուրհակային օրէնքներ. 6) Գեղագրութիւն եւ արագագրութիւն (ուղղումն ձեռագրի)։

Ընդունելութիւնը՝ սեպտեմբերի 1-ից ամեն օր՝ կուրսերում եւ Եղբ. Ծովիանեան եւ ընկ. ԲԱԳՈՒԻ բաժանմունքում։ Կուրսերի կանոնագրութիւնը (уставъ) եւ մանրամասն ծրագիրը—տրվում եւ ուղարկվում են ձրիաբար։ Օտարաքաղաքացիները դիմում են՝ БАКУ, учредителю коммерческихъ курсовъ А. И. Теръ-Каспарову. (և. չ.) 1—25

ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱԲՐԱՀԱՄԱԵՆ

Հեղինակ «Զեռնարկի առևտրական և գործարանական հաշուապահութեան

ՈՒՍՈՒՑԱՆՈՒՄ ԵՒ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ Է

Երկու սեռի անձանց՝ 4 ամսվայ ընթացքում հաշուապահութիւն գործնականապէս, եռաշխատելով, և եղած դէպքերում յանձն է առնում պաշտօնի առաջարկել։

ՊԱՐԱՊՄՈՒՆՔԻ ԱՌԱՐԿԱՆԵՐՆ ԵՆ

Ա) Կրկնակի իտալական հաշուապահութիւն ըստ ամենայն առևտրական ճիւղերի, հանդերձ նաւթային արդիւնաբերական և կերոսինի գործարանական հաշուեհատութեան։
Բ) Առևտրական թուաբանութիւն։
Գ) Առևտրական նամակագրութիւն։
Դ) Գեղագրութիւն և ամենավատ ձեռքերի ուղղելը։

Պարապմունքները սկսվելու են 1900 թ-ի սեպտեմբերի 15-ից, ճաշից յետոյ, և պարբերաբար շարունակվելու են իւրաքանչիւր ՁՈՐՍ ամսից յետոյ. իսկ կիրակի օրերը լինելու են առանձին գործնական պարապմունքներ։

Ցանկացողները թող դիմեն գրաւոր կամ անձամբ 3 ժամից մինչեւ 6 ժամ երեկոյեան, ՍՕԼՕԼԱԿ, Սերգիեվսկայա փողոց, տուն Լիսիցեանի, № 20։

Վերոյիշեալ հաշուապահութեան ձեռնարկը ծախվում է ԹԻՖԼԻՍՈՒՄ, հեղինակի մօտ, և Ռուսաստանի բոլոր յայտնի գրավաճառանոցներում։ ԳԻՆՆ Է 3 ր. 50 կոպէկ։ Օտարաքաղաքացիները դիրքը գնելու համար կարող են դիմել հեղինակին, առանց պոստի ծախս վճարելու։ 3—30

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ

ԵՐԿՈՒ ՍԵՌԻ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ

ՏԱՍՆԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Առևտրական Կուրսերի նպատակն է՝ մասնագիտական առևտրական կրթութիւն տալ երկու սեռի անձանց և պատրաստել գործնական ճանապարհով հմուտ հաշուապահներ։ Աւարտողները ստանում են ատեստատներ։

Ասանդելի առարկայք սրանք են՝ 1) Առևտրական Տնտեսութիւն, 2) Առևտրական Թուաբանութիւն, 3) Հաշուապահութիւն (պարզ, կրկնակի և բանկային), 4) Թուաբանութիւն համրիչի վրա, 5) Առևտրական թղթակցութիւն, 6) Առևտրական և մուրհակի կանոնագրութիւն և 7) Գեղագրութիւն, վատ ձեռքի ուղղելը։

Ուսումը սկսվելու է սեպտեմբերի 15-ից։ Ընդունելութիւնը սեպտեմբերի 1-ից, ամենայն օր, առաւօտեան 10-ից մինչեւ 11-ը, և երեկոյեան 4-ից մինչեւ 8 ժամը, կուրսեր հիմնողի բնակարանում, Սօլոլակում, Ալէքսանդր Փրիղոնովի տանը № 9, Սերգիեվսկայա և Լերմոնտովսկայա փողոցների անկիւնում։ Ծրագիրը և կանոնները կարելի է ստանալ ձրիապէս եղբ. Ծովիանովների բանկային գրասենեակում և կուրսեր հիմնողի բնակարանում։ Օտարաքաղաքացիք դիմում են՝ Тифлисъ, С. П. Мануэльянцу. (չ. չ.) 3—25

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET C-ie

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ն. ՊԱԿԷ ԵՒ ԸՆԿ.

Կանոնաւոր եւ ուղղակի նաւագնացութիւն ՄԱՐՍԷԼԻՑ ԲԱԹՈՒՄ, չորեքշաբթի օրերը, երկու շաբաթը մի անգամ։

Եւ հակառակը՝ Բաթումից Մարսէլ, մտնելով Տրապիզոն, Սամսօն եւ Պոլիս։ Մեկնում է Բաթումից չորեքշաբթի, 5/18 յուլիսի ՍԻՐԿԱՍԻ շոգենաւը, նաւապետ ԳԱՐՐԻԳ։ Եւ ապագէս շարունակաբար, երկու շաբաթը մի անգամ, չորեքշաբթի օրերը, ժամը 4-ին ճաշից յետոյ։

Բաթումից Պարիզ ուղղակի հաղորդակցութեան տոմսակներ տրվում են սովորականից պակաս գներով։

Ամիսը մի անգամ կանոնաւոր հաղորդակցութիւն Բաթումի եւ Անտվերպէնի մէջ, ընդունելով ապրանքներ բոլոր հիւսիսային նաւահանգիստների համար։

Ապրանքների եւ ճանապարհորդների մասին հարկաւոր տեղեկութիւններ ստանալու համար թող բարեհաճեն դիմել ընկերութեան գործակատարներին՝

ԲԱԹՈՒՄՈՒՄ—պ. Վիկտոր դ'Արնօվին, Նաբէրէժնայա։ ԹԻՖԼԻՍՈՒՄ—պ. Օ. Գ. Բարեկենդանեանին, Սիօնի փող. Խօջաիարուխովի եւ Մայսուրաձէի քարվանսարա։ ԲԱԳՈՒ—եղբ. Վ. եւ Ի. Մուրթաֆեաններին, Նաբէրէժնայա փողոց, տուն Կրասիլնիկովի, № 27։ ՆՈՎՈՐՈՍՍԻՅՍԿ—Վլադիկաւկազի երկաթուղու առեւտրական գործակալութիւն (և. հ. չ.) 2—20

Дозволено цензурою, Тифлисъ, 30 Іюня 1900 г. Типографія Грузинск. Т—ва, Большая-Ванкская ул., № 27.